

խարհիս Հայոց: Ելաւ Ամիրգունախանն բազում զօրօք եւ եհան զամենեւեան ի տանէ, եւ ի հայրենեաց, Հայք՝ Տաճիկք՝ Շիրակփանայ մինչեւ ի գաւառս Գողթան: Վայ մեզ թէ յայնմ աւուր նեղութիւնն ո՞վ կարէ պատմել, թէ որպէս անողորմաբար տանէին զազգս Հայոց. ոչ թողուն որդիս Բարձրէ (?), զծերացեալ ծնողսն, կամ առջեն մարք զմանկունս իւրեանց: Այնչափ շտապաւ վարէին, որ ոչ հայր՝ զորդին գտանէր, եւ ոչ եղբայր՝ զեղբարս. եւ ոչ այր զկին իւր, եւ ոչ մայր զգոռստրն իւր. բազումք ծերք եւ տկարք կոխան եղեալ մեռանէին. եւ լինէին գէշ գազանաց: Յորժամ հասան ի մեծ գետն Երասխ, եկեալ խապարս, թէ ահա հասին զօրք Օմարին, որ ոչ գոյ հնար զերծանելոյ: Յայնժամ ահ մեծ անկաւ. ամենեքեան թափեցան ի ջուրն եւ անցին ի միասին, թագաւորն եւ զօրք իւր եւ Ռամիկքն, եւ ոչ ոք վնասեցաւ խնամովն Աստուծոյ: Աւերեցին զգիւղաքաղաքն Ջուղայ որ էր գեղեցկաշէն եւ հիանալի քաղաք . . . »

Հաւանական է սակայն, որ խօսքը վերաբերում է Զուղայեցիներին, որովհետեւ Առաքել վարդապետի ասածներն հաստատում են եւ ուրիշ ականատես պատմաբաններ: Վերցիշեալ վանքի ձեռագիրների մէջ մնացել է մի ժամանակակից աշուղի յօրինած երգը, որ ահա.

«Եկայք Աղամայ որդիք ժողովեալ ի մի նստենք
Ես ձեզ պատմեմ լալազին զողք եւ զկոծն Հայոց ազգին:
Ի Հայոց հազար թուին եւ յիսուն երեք յաւելին:
Ելք աւելեաց պատկերին մուտ յամսեանն Նաւասարդին:
Խաւար տիրեաց մեր Ազգին՝ քարկացաւ մեր Տէրն
երկնային .

Որպէս կարկուտ ի յամպէն՝ նոխպէս զօրքն Պարսից
իջին: